

արտասուքը վայրկենին չորցաւ եւ երկու շանթածիգ աչքերով՝ «Մի՛ խօսիր, մահը միայն զանոնք իրենց արգելանէն կրնայ բաժնել, վճիռն անդամնալի է՛», գոչից: Ես մեր տունը դարձայ սրտաբեկ եւ դառնացեալ: Զօրեղբայրս օրաւոր տկարացաւ՝ բայց այնչափ տարի ապրեցաւ, որ երբ մեռաւ եւ Վասկանուշի հրաւեր գնաց տուն դառնալ երբ կամենար, նա այսչափ միայն պատասխանէր էր թէ՛ «Շատ երջանիկ եմ կրօնաւորութեան հաւասար կեանքի մէջ, ուր ազնուատոհմութիւն չի կար եւ աստուծոյ արարածներն հաւասար էին»:

Այստեղ դադրեցաւ իշխանուհին: Իսկ խոսքով հետաքրքիր՝ չի կրցաւ համբերել եւ հարցուց.

— Իսկ Յովնան ինչպէ՛ս մէջտեղ ելաւ նորէն:

— Այդ երկաթէ մարդը սպաննել միայն կարելի էր, բայց, մշտնջենաւոր բանտի դատապարտել յիմարութիւն էր: Զօրեղբայրս՝ նա էլ Շիրակայ գաւառը, որ իր սեփականութիւնն էր, վանքի մէջ բանտարկել հրամայած էր, եւ ամենայն խստութեամբ պահել, եւ իմանալու համար թէ իւր հրամանը ճշտութեամբ կը պահուէ՞ր, յանկարծ երկու տարի վերջը ճանապարհորդութիւն յանձն առնելով կ'երթար աչօք տեսնելու իւր կալանաւորը, որ բաւական նկուն չգտնելուն համար՝ կը հրամայէր անելի խիստ բանտի մը դատապարտել, եւ գտնելով այդ վանքին ընդարձակութեան մէջ գետնափոր սենեակ մը խոնաւ եւ մահաբեր, հոն նետել կ'ուտար այդ անզգամը, որուն եղեռնն էր սիրել գեղեցիկ, սիրուն եւ սիրոյ արժանի աղջիկ մը, եւ որուն վիճակին բարձրութեան եւ հեռաւորութեան միջոցը խեղճ լեռնցին չէր կրցեր, չափել: Բայց կ'երեւի թէ աստուած կուզի երբեմն մեր յիմարութեան աստիճանը մեր երեսին յայտնել, այդ մթին եւ խոնաւ սենեակը, որ խոր վիրապ կը նմանէր, անծանօթ գետնափոր ճամփու մը սկիզբն էր, ուսկից նոյն գիշերը սողալով ելեր, գնացեր եւ ազատէր էր Յովնան: Իսկ Բագրատունեաց իշխանը իւր վրեժխնդրութեան մէջ սխալեալ՝ լի ատելութեամբ եկաւ Տարօն եւ հոն քանի մը տարիէն մեռաւ, իւր երկու երիտասարդ գաւակաց մահն էլ տեսնելով: Իսկ